ՇԴ/0027/01/20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Նախագահող դատավոր՝ Մ.Արղամանյան
դատավորներ՝ Ա.Մնացականյան
Մ.Պապոյան

31 հուլիսի 2024 թվական քՍերևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի սեպտեմբերի 9-ի որոշման դեմ ամբաստանյալ Սամվել Գևորգի Հովհաննիսյանի պաշտպան Կ.Գրեյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2019 թվականի նոյեմբերի 25-ին ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնում 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ քրեական օրենսգիրք) 296-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 68174019 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2020 թվականի մարտի 16-ի որոշմամբ Սամվել Գևորգի Հովհաննիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ նույն օրվա մեկ այլ որոշմամբ Սամվել Հովհաննիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2020 թվականի մարտի 24-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի մայիսի 6-ի դատավճռով Ս.Հովհաննիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել տուգանք՝ 600.000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: Ս.Հովհաննիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը թողնվել է անփոփոխ:

3. Ամբաստանյալ Ս.Հովհաննիսյանի և պաշտպան Կ.Գրեյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2021 թվականի սեպտեմբերի 9-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի մայիսի 6-ի դատավճիռն անփոփոխ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ամբաստանյալ Սամվել Հովհաննիսյանի պաշտպան Կ.Գրեյանը, 2021 թվականի դեկտեմբերի 17-ին, բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի մարտի 22-ի որոշմամբ

ընդունվել է վարույթ[1] և 2024 թվականի հուլիսի 3-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

5. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Այսպես, բողոքաբերը նախ նշել է, որ ապացույցների բավարար համակցությամբ չի ապացուցվել Ս.Հովհաննիսյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարելը: Ըստ բողոքի հեղինակի՝ քրեական վարույթի ընթացքում ոչ միայն չի հերքվել ի պաշտպանություն Ս.Հովհաննիսյանի բերված փաստարկը, համաձայն որի՝ հատված ծառերից յոթը նախկինում հատված են եղել և դրանց բարձրությունը կազմել է 80-150 սանտիմետր, այլ նաև չի հաստատվել, որ այդ յոթ ծառը հատվել են մինչև աճի դադարեցման աստիճանի:

Բացի այդ, բողոք բերած անձը գտել է, որ սխալ է հաշվարկվել ամբաստանյալի ենթադրյալ գործողությունների արդյունքում պատճառված վնասի չափը: Որպես հիմնավորում նշվել է, որ «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումները չեն կարող դրվել քրեական օրենսգրքով նախատեսված արարքի կատարմամբ պատճառված վնասի չափի հաշվարկման հիմքում:

5.1. Միևնույն ժամանակ, ըստ բողոքաբերի՝ Ս.Հովհաննիսյանի նկատմամբ նշանակվել է անարդարացի պատիժ. պատշաճ իրավական գնահատականի չեն ենթարկվել պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները և անձը բնութագրող տվյալները:

---

[1] Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող՝ 483-րդ հոդվածի 8-րդ մասի, սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

5.2. Վերոգրյալից բացի, բողոք բերած անձը փաստարկել է, որ Ս.Հովհաննիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

6. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի սեպտեմբերի 9-ի որոշումն ու ճանաչել և հոչակել Ս.Հովհաննիսյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում կամ քրեական հետապնդումը դադարեցնել ու քրեական գործի վարույթը կարճել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

<u>Վճռաբեկ բողոքի բնության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

7. Սամվել Հովհաննիսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրվում է այն արարքի համար, որ նա. *«(...) 2018 թվականի սեպտեմբերից մինչև օրս աշխատելով Գյումրի քաղաքի թիվ 20-րդ դպրոցում որպես տնօրենի տնտեսական գծով տեղակալի պաշտոնում, առանց համապատասխան թույլտվություն ստանալու, 2019 թվականի նոյեմբերի 7-ից 15-ն ընկած ժամանակահատվածում անզգուշությամբ գործող Գալուստ Ալեքսանյանին օգտագործելու միջոցով հանձնարարել է մինչև ահի դադարեցման ստրիճանն ապօրինի հատել Գյումրի քաղաքի թիվ 20-րդ դպրոցի բակում աճած «Թեղի» տեսակի թվով 11 ծառերը՝ այդ կերպ բուսական աշխարհին պատճառելով զգալի չափերի՝ 388.500 ՀՀ դրամի գույքային վնաս»*[2]:

8. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ *«(...) Սամվել Հովհաննիսյանի ցուցմունքներն անարժանահավատ են, և այդ ցուցմունքներով նա նպատակ է հետապնդում հիմքեր ստեղծել քրեական պատասխանատվությունից և պատժից խուսափելու համար, (...):*

[2] Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 302-311:

Դատաքննության ընթացքում հետազոտված, (...) ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմամբ՝ [Առաջին ատյանի դ]ատարանը գտնում է, որ ամբաստանյալ Սամվել Հովհաննիսյանի ցուցմունքները՝ ծառերը մինչև աճի դադարեցման ասրիճան հատված չլինելու վերաբերյալ, հերքվում են (...) ապացույցների բավարար համակցությամբ:

(...)

Ինչ վերաբերվում է դատաքննության ընթացքում պաշտպանության կողմի ներկայացրած՝ Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալի գրությանը, «Գյումրու թիվ 20 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Կ.Միլամյանի գրությանն ու կից փաստաթղթերին, ինչպես նաև՝ թիվ ՇԴ/0060/01/19 քրեական գործով 2018 թվականի սեպտեմբերի 5-ին կատարված՝ դեպքի վայրի զննության արձանագրությանն ու դրան կից լուսանկարչական հավելվածին, ապա [Առաջին ատյանի դ]ատարանը գտնում է, որ մատնանշված փաստաթղթերը որևէ կերպ չեն ապացուցում ամբաստանյալի անմեղությունը կամ հերքում մեղադրանքի կողմի ներկայացրած փաստերն ու ապացույցները»[3]:

9. Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով վիճարկվող դատական ակտը, արձանագրել է հետևյալը. *«(...) Գործով ձեռք բերված ապացույցների ուսումնասիրությամբ վերաքննիչ դատարանը հիմնավորված է համարում Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն առ այն, որ Սամվել Հովհաննիսյանի հանձնարարությամբ կատարվել է 11 հատ մինչև աճի դադարեցման ասրիճանը «թեղի» տեսակի ծառերի ապօրինի հատում:*

(...)

Առաջին ատյանի դատարանը, պահպանելով ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ հոդվածների պահանջները, Սամվել Հովհաննիսյանի նկատմամբ նշանակել է տուգանքի ձևով պատիժ՝ 600.000 ՀՀ դրամի չափով, որը համապատասխանում է նրա կողմից կատարված հանցագործության բնույթին ու ամբաստանյալի անձնավորությանը, ինչպես նաև անհրաժեշտ և բավարար է նրան

[3] Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 25-37:

ուղղելու ու նոր հանցագործությունները կանխելու համար, իսկ վերաքննիչ բողոքում չի ներկայացրել գործի փվյալներից բխող հիմնավոր փաստարկներ, որոնք կարող են հիմք հանդիսանալ ամբաստանյալի նկատմամբ առավել մեղմ պատիժ նշանակելու համար»[4]:

10. Վճռաբեկ դատարան է ստացվել Ս.Հովհաննիսյանի դիմումը, ըստ որի՝ վերջինս համաձայն է և չի առարկում, որ իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվի՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով[5]:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված է արդյո՞ք Ս.Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում մեղավոր ճանաչելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունը:

12. Բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում ստուգման ենթարկելով քրեական գործի փաստական հանգամանքների բացահայտման ու քրեական օրենքի կիրառման ճշտությունը, գործը քննելիս և լուծելիս քրեադատավարական օրենքի պահանջների պահպանումը, ինչպես նաև ուսումնասիրության ու գնահատման ենթարկելով քրեական գործում առկա նյութերը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է հետևության, որ ստորադաս դատարանները ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքում Ս.Հովհաննիսյանի մեղավորության վերաբերյալ հանգել են ճիշտ հետևության:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առաջադրված մեղադրանքում Ս.Հովհաննիսյանի մեղքը հաստատված, իսկ բողոքաբերի պատճառաբանությունները հերքված են վկաներ Կ.Միլամյանի, Ա.Տիգրանյանի, Գ.Գալստյանի, Գ.Ալեքսանյանի, Լ.Գասպարյանի, Շ.Պետրոսյանի, Մ.Հանեսօղլյանի ցուցմունքներով, որպես այլ փաստաթուղթ ապացույց ճանաչված՝ ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնի

---

[4] Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 89-104:
[5] Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 139:

պարեկապահակային ծառայության դասակի ավագ ոստիկան Ա.Սարիբեկյանի զեկուցագրով, ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի մասնագիտական եզրակացությամբ, Ա.Տիգրանյանի ու Ս.Հովհաննիսյանի դիմումներով, Գ.Ալեքսանյանին ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժին բերման ենթարկելու, դեպքի վայրի զննության արձանագրություններով և իրեղեն ապացույց ճանաչված առարկաներով[6]:

Նշվածի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը պատճառված վնասի հաշվարկման տեսանկյունից, ըստ էության, հենվող է (բլանկետային), քանի որ բնապահպանական իրավախախտումների հետևանքով բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագները և դրա հաշվարկման կարգը նախատեսված է «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքով, այսինքն, այս հանցագործությամբ պատճառված վնասը պետք է որոշվի՝ հաշվի առնելով նշված օրենքի իրավակարգավորումները:

13. Վերոգրյալից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ս.Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում մեղավոր ճանաչելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունը հիմնավորված է:

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք Ս.Հովհաննիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք) 35-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական*

---

[6] Տե՛ս քրեական գործ, հատորներ 1-ին և 2-րդ:

հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝ (…)

6) անցել են վաղեմության ժամկետները, (…)

5. Դատարանը, հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը»:

ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Ոչ մեծ ծանրության հանցագործություններ են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում երկու տարի ժամկետով ազատազրկումը, (…)»*:

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները.*

1) երկու տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

(…)

2. Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը (…)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Անտառային հողերում, ինչպես նաև անտառային հողերի մեջ չմտնող տարածքներում ծառերը, թփերը ապօրինի հատելը կամ ոչնչացնելը, կամ հատումներն արգելված ծառերը, թփերը հատելը կամ ոչնչացնելը, ծառերը, թփերն առանց թույլտվության տեղափոխելը, պետական, համայնքային կամ այլ անձանց սեփականություն համարվող բուսածածկը ոչնչացնելը կամ մինչև աճի դադարեցման աստիճանի վնասելը, եթե այդ գործողությունները զգալի վնաս են պատճառել կամ կատարվել են նույն արարքի համար վարչական տույժ նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝*

պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝

երկուսից հինգ տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով»:

15. Մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Սամվել Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասով վերագրվող արարքն ավարտվել է **2019 թվականի նոյեմբերի 15-ին**[7]: Ս.Հովհաննիսյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը կայացվել է 2021 թվականի մայիսի 6-ին, որը բողոքարկվել է Վերաքննիչ դատարան, իսկ Վերաքննիչ դատարանը բողոքի քննության արդյունքում որոշում է կայացրել 2021 թվականի սեպտեմբերի 9-ին[8]: Նշված որոշման դեմ Ս.Հովհաննիսյանի պաշտպան Կ.Գրեյանի կողմից վճռաբեկ բողոք է բերվել 2021 թվականի դեկտեմբերի 17-ին, որը Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի մարտի 22-ի որոշմամբ ընդունվել է վարույթ[9]:

17. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից ակնհայտ է, որ Ս.Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված արարքի՝ որպես ոչ մեծ ծանրության հանցանքի համար նույն օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված քրեական պատասխանատվության ենթարկելու երկամյա ժամկետը լրանալու օրվա՝ **2021 թվականի նոյեմբերի 15-ի** դրությամբ, վերջինիս նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտած չի եղել, և նա տվել է իր համաձայնությունը, որպեսզի իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվի՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով[10]:

---

[7] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[8] Տե՛ս սույն որոշման 2-րդ և 3-րդ կետերը:
[9] Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:
[10] Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ս.Հովհաննիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով: Նման պայմաններում բողոքաբերի՝ սույն որոշման 5.1-րդ կետում նշված փաստարկին անդրադառնալն առարկայազուրկ է:

Վերոշարադրյալը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիման վրա բեկանելու Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի մայիսի 6-ի և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի սեպտեմբերի 9-ի դատական ակտերը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա Ս.Հովհաննիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնելու և սույն քրեական գործի վարույթը կարճելու:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ գտնում է, որ Ս.Հովհաննիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված չհեռանալու մասին ստորագրությունը պետք է վերացնել:

18. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Սամվել Գևորգի Հովհաննիսյանի վերաբերյալ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասով Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի մայիսի 6-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի սեպտեմբերի 9-ի որոշումը՝ բեկանել:

2. Սամվել Գևորգի Հովհաննիսյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնել ու քրեական գործի վարույթը կարճել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

3. Սամվել Գևորգի Հովհաննիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված չհեռանալու մասին ստորագրությունը՝ վերացնել:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ